Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Հակոբ Արշակյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Լոս Անջելես, Սան Ֆրանցիսկո, Վաշինգտոն), 2019թ. մայիսի 28-ից հունիսի 4-ը:

4. Հրավիրող կողմը.

Սեփական նախաձեռնությամբ:

5. Գործուղման նպատակը.

Քննարկումներ տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում հայ-ամերիկյան համագործակցությունն ընդլայնելու հնարավորությունների ու ուղիների վերաբերյալ:

6. Քննարկված թեմաները.

Հ. Արշակյանի գլխավորած պատվիրակությունը, որում ներգրավված էին կապի, բարձր տեխնոլոգիական ոլորտում մի շարք հայկական ընկերությունների և ասոցիացիաների ղեկավարներ, հանդիպումներ է ունեցել մեծ թվով ամերիկյան կրթական հաստատությունների և ոլորտային կազմակերպությունների, ինչպես նաև ֆինանսական հաստատությունների ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների ընթացքում հիմնականում քննարկվել են հայ-ամերիկյան համագործակցությունը բարձր տեխնոլոգիական ոլորտը զարգացնելու հնարավորությունները, դրանց ֆինանսավորման փոխշահավետ տարբերակները, որակյալ աշխատուժի ապահովման նպատակով անհրաժեշտ կրթական և փոխանակման ծրագրերի մշակումն ու իրականացումը, հայկական տեխնոլոգիական ընկերությունների արտադրանքի արտահանումը միջազգային շուկա, Սիլիկոնյան հովտում Հայաստանի գիտարար, տեխնոլոգիական ներուժի ներկայացման կարևորությունը, ԱՄՆ-ից Հայաստան երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների ներմուծման սահմանափակումները, նորարարական լաբորատորիաների ստեղծումը, կիբեռանվտանգությունը, ՀՀ-ում ազգային վենչուրային ֆոնդ ստեղծելու նախաձեռնությունը, <<ինժեներական քաղաք>> ծրագրի իրականացումը, թվային տնտեսության ուղղությամբ հնարավոր համագործակցության ուղղությունները և այլն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հ. Արշակյանի գլխավորած պատվիրակության աշխատանքը Միացյալ Նահագներում սկսվել է Սիլիկոնային հովտում կայացած հանդիպումներով, որոնց կազմակերպմանն աջակցել է <<Սինոփսիս-Հայաստան>> ընկերության նախագահ, ՀԲԸՄ Սիլիկոնային հովտի կառույցի ղեկավար Երվանդ Զորյանը: Լոս Անջելեսում ՀՀ Գլխավոր հյուպատոս Արմեն Բայբուրդյանի մասնակցությամբ պատվիրակության անդամներն այցելել են Սիլիկոնային հովտում գտնվող <<Intel>> ընկերություն, ծանոթացել ընկերության ստեղծման և զարգացման պատմությանը, ապա ուղևորվել են Սան Խոսեի պետական համալսարան և հանդիպել <<IBM Research>> ընկերության փոխնախագահ և գիտահետազոտական լաբորատորիաների տնօրեն Ջեֆ Ուելսերի հետ:

Ջ. Ուելսերը ներկայացրել է <<IBM Research>> ընկերության կողմից արհեստական բանականության ոլորտում իրականացվող ծրագրերը, հետազոտությունները և զարգացման հեռանկարները: Հանդիպման ընթացքում ցուցադրվել է ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պատրաստած կարճատև ֆիլմը՝ նվիրված Հայաստանի տեխնոլոգիական պատմությանը, ներկային Հայաստանում հաջողություն գրանցած ընկերություններին: Այնուհետև ծավալվել է ակտիվ քննարկում, որտեղ շոշափվել են բարձր-տեխնոլոգիական ոլորտում կրթության և հետազոտական աշխատանքների և գիտահետազոտական լաբորատորիաների ամերիկյան փորձի ուսումնասիրման, Հայաստանում այդ փորձի կիրառման, երկկողմ գործակցության հարցեր: Սրան հաջորդել է ծավալուն աշխատանքային հանդիպումը Համալսարանի ֆակուլտետների դեկանների և մի շարք ամերիկյան ընկերությունների (<<Plug&Play>>, <<Logitech>> և այլն), որը կազմակերպվել էր Սան Խոսեի պետական համալսարանի նախագահ Մերի Փափազյանը: Նախարարը հանդես է եկել ելույթով, որտեղ ներկայացրել է Հայաստանի հարուստ գիտական ժառանգությունը, երկրի գրավչությունը գիտարար և գիտահետազոտական ոլորտներում: Իր ելույթում նա նշել է, որ ներկայումս Հայաստանում բարենպաստ իրավիճակ է ստեղծված՝ բարձր-տեխնոլոգիաների և գիտարար ոլորտներում ներդրումներ կատարելու, ինչպես նաև ամերիկյան ընկերությունների կողմից Հայաստանում մասնաճյուղեր բացելու համար: Նա կարևորել է կրթություն, գիտություն, հետազոտություն, առևտրայնացում, արտադրություն շղթայական կապի կարևորությունը Հայաստանում ոլորտի զարգացման համար: Հանդիպման ընթացքում ելույթներով հանդես են եկել նաև Երվանդ Զորյանը և Մերի Փափազյանը:

ՀՀ Գլխավոր հյուպատոս Ա. Բայբուրդյանի հետ միասին հայկական պատվիրակությունն այցելել է <<Sky Deck Accelerator>> ծրագրի գրասենյակ, որը գործում է Բերքլիի համալսարանի հովանու ներքո: Ծրագրի նպատակն է օժանդակել ստարտափներին նախնական փուլում՝ 3 ամսվա կտրվածքով 50,000 ԱՄՆ դոլար դրամաշնորհ տրամադրելով: Ծրագիրը գործարկվել է 2012թ. և մինչ օրս օժանդակություն է ցուցաբերել զգալի թվով հայկական ստարտափների: Ներկայումս մի քանի հայկական ստարտափներ արդեն ստացել են ֆինանսավորում, ինչպես նաև դիմել են դրա համար: Ծրագիրը ունի ֆինանսավորում մի շարք խոշոր ներդրումային հիմնադրամներից, և տարեկան բյուջեն կազմում է մոտ 25 մլն ԱՄՆ դոլար: Ծրագիրը տեղում ուսումնասիրելուց հետո պատվիրակությունը հանդիպել է Բերքլիի համալսարանի ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան Անա Լի Սաքսենյանին:

Դեկան Սաքսենյանը ներկայացրել է Բերքլիի համալսարանի ինֆորմատիկայի ֆակուլտետի ստեղծման պատմությունը, իրականացվող կրթական քաղաքականությունը և ծրագրերը: Նախարարը ներկայացրել է Հայաստանում <<թավշյա հեղափոխությունից>> հետո ՀՀ կառավարության կողմից որդեգրած բարձր տեխնոլոգիաների նկատմամբ, որպես առաջնահերթություն, կարևորել է Բերքլիի պես աշխարհահռչակ հաստատության հետ կրթական ծրագրերի իրականացման կարևորությունը:

Հանդիպման վերջում քննարկվել է նաև ս.թ. հոկտեմբերի 6-9-ը ՀՀ-ում անցկացվելիք Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային 23-րդ կոնգրեսի նախապատրաստական աշխատանքները՝ կարևորելով ամերիկյան կողմի մասնակցությունը նշյալ միջոցառմանը:

Նույն օրը նախարար Արշակյանն այցելել է <<Mubadala>> ներդրումային հիմնադրամի Սան Ֆրանցիսկոյի գրասենյակ, որը հիմնադրամի ԱՄՆ կենտրոնականն է: Եվրոպա մայրցամաքի կենտրոնականը գտնվում է Լոնդոնում. հիմնադրամը գրասենյակներ ունի նաև Մոսկվայում, Չինաստանում: <<Mubadala>> ներդրումային հիմնադրամը կազմավորվել է 2017թ., որի համընդհանուր ակտիվները կազմում են մոտ 220 միլիարդ ԱՄՆ դոլար: Հիմնադրամի ԱՄՆ ներդրումային փաթեթը կազմել է 400 միլիոն ԱՄՆ դոլար: Հիմնադրամը ֆինանսավորել է բանկային, էներգետիկ, բարձր տեխնոլոգիաների, թվային առողջապահության և կիբեռանվտանգության բնագավառի ընկերությունների: Նախարարն իր ելույթում ներկայացրեց բարձր տեխնոլոգիաների ոլորտում ՀՀ Կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը, ռազմավարությունը, 2019թ. Հայաստանում անցկացվող միջազգային կարևորագույն համաժողովների մասին տեղեկատվություն, ինչպես նաև ցուցադրվել է ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պատրաստած կարճատև ֆիլմը: Նախարարը տեղեկացրեց Հայաստանում ոլորտի նորաստեղծ ընկերություններին սատարելու համար ներդրումային հիմնադրամ ստեղծելու ծրագրերի մասին: Այդ նպատակով նա հրավիրեց <<Mubadala>> ներդրումային հիմնադրամի ղեկավար կազմին Հայաստան՝ մասնակցելու այդ ստեղծվելիք հիմնադրամներին և տեղում ծանոթանալու ՀՀ ներդրումային հնարավորություններին:

Նախարար Արշակյանի գլխավորած պատվիրակությունն այցելել է նաև <<Nvidia-Automotive>> ընկերության գրասենյակ: ՀՀ պատվիրակությանը ներկայացվել են արհեստական բանականության բնագավառում ընկերության կողմից իրականացվող լայնամասշտաբ գիտահետազոտական աշխատանքները: Ընկերության մշակած ծրագրերը իրենց գործնական կիրառումն են ստացել խաղային համակարգերում, ինքնավար ավտոմեքենաների ծրագրերում, <<խելացի քաղաք>> հայեցակարգում, արդյունաբերությունում, անվտանգության համակարգերում և բազմաթիվ այլ ոլորտներում: Ընկերության ներկայացուցիչները ցուցադրել են նոր սերնդի համակարգիչները, արհեստական բանականության ծրագրերի հնարավորությունները: Ցուցադրությանը հաջորդած քննարկման ընթացքում <<Nvidia-Automotive>> ընկերության ներկայացուցիչները տեղեկացրել են ընթացիկ և ծրագրավորված աշխատանքների, ինչպես նաև արհեստական բանականության զարգացման փուլերի մասին: Հ. Արշակյանը ներկայացրել է Հայաստանում գիտահետազոտական ընկերությունների կողմից իրականացվող աշխատանքները և առաջարկել է <<Nvidia-Automotive>> ընկերությանը Հայաստանում հիմնել իրենց ընկերության գիտահետազոտական լաբորատորիան, որի համար բոլոր նախապայմանները ներկայումս առկա են Հայաստանում:

Այնուհետև, հայկական պատվիրակությունը այցելել է աշխարհահռչակ Ստենֆորդի համալսարան: Պատվիրակությանը ներկայացվել է <<Uber Behavior>> հետազոտական լաբորատորիայի աշխատանքը, որի նպատակը կայանում է վարքային գիտության տեսանկյունից գիտելիքների և մեթոդաբանությունների կիրառումը, որպեսզի ստեղծվեն ծրագրեր և արտադրանք, որոնք ինտուիտիվ և հաճելի են հաճախորդների համար: Այդ ծրագրերը կիրառվում են՝ որոշումներ կայացնելու, մոտիվացիան, ուսումնառությունը, փորձարարական և քվազի-փորձարարական նախագծման մեթոդաբանական հնարավորությունները, ինչպես նաև վիճակագրական հմտությունն իրագործելու համար այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հիերարխիկ մոդելավորումը և պատճառային ելակետային մոտեցումները:

Նախարարը հանդիպել է ամերիկյան գործարար Թիմ Դրեփերին, ով ղեկավարում է ներդրումային հիմնադրամը, <<Draper Associates>> ընկերությունը, <<Draper>>-ի համալսարանը: Նախարար Արշակյանին ներկայացնելով իր գործունեությունը՝ Թիմ Դրեփերը նշել է, որ իր ներդրումային հիմնադրամի կապիտալը զգալիորեն գոյանում է բիթքոյնների առքուվաճառքից, բլոքչեյն տեխնոլոգիաների կիրառումից, ինչպես նաև նա էական գումարներ է ներդնում բարձր տեխնոլոգիաների ստարտափներում, մասնավորապես՝ նրա հաջողություններից է <<Theranos>> արյան ստուգման ստարտափի ֆինանսավորումը: <<Draper>>-ի համալսարանը պատրաստում է գործարարների՝ շեշտը դնելով նրանց առաջնորդային, հոգեբանական և ղեկավարման ունակությունների զարգացման վրա: Ներկայումս համալսարանում ուսանում են 77 երկրներից ուսանողներ: Անդրադառնալով Հայաստանին՝ Թ. Դրեփերը և Հ. Արշակյանը քննարկել են Հայաստանում <<Draper>>-ի համալսարանի մասնաճյուղի բացման հարցը, ինչը Դրեփերը համարել է շատ իրատեսական՝ միաժամանակ նշելով, որ ցանկալի է ՀՀ Կառավարությունը քաղաքականություն մշակի ու քայլեր ձեռնարկի՝ գործարար և ֆինանսական աշխարհում Հայաստանը ճանաչելի դարձնելու համար: Թիմ Դրեփերին ցուցադրվել է ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պատրաստած կարճատև ֆիլմը՝ նվիրված Հայաստանի տեխնոլոգիական առաջընթացի պատմությանը, ներկային, Հայաստանում հաջողություն գրանցած ընկերություններին: Ներկայացվել են <<թավշյա հեղափոխությունից>> հետո ՀՀ կառավարության կողմից իրականացրած լայնամասշտաբ բարեփոխումները տնտեսության, գործարար միջավայրի բարելավման, ժողովրդավարության ամրապնդման ոլորտներում: Նախարարը Դրեփերին փոխանցել է ՀՀ Վարչապետ Ն. Փաշինյանի հրավերը՝ մասնակցելու ս.թ. հոկտեմբերի 6-ից 9-ը Հայաստանում կայանալիք <<Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսի 23-րդ միջոցառմանը>>՝ նշելով, որ Հայաստան այցելությունը թույլ կտա ծանոթանալ Հայաստանի ներդրումային հնարավորություններին, գիտական և տեխնոլոգիական ներուժին:

Նախարար Հ. Արշակյանի գլխավորած պատվիրակությունը այցելել է <<Google-Maps/Pay>> ընկերության գրասենյակ, որտեղ հանդիպել է ընկերությունում աշխատող ազգությամբ հայ մասնագետների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Youtube-ի գործառույթների ակտիվացման և Google Maps-ի հետ կապված առկա խնդիրները: Հ. Արշակյանը նշել է, որ իր ղեկավարած գերատեսչության նպատակներից և այցի խնդիրներից է համարում համապատասխան մի հարթակի ձևավորումը, որը թույլ կտա ստեղծել մշտական կապ Հայաստանի բարձր

տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերությունների ու մասնագետների և Սփյուռքի, տվյալ դեպքում Սիլիկոնային հովտում հայ մասնագետների ու հայկական ծագման ընկերությունների միջև, ինչն իր հերթին կդյուրացնի Հայաստանի գիտարար, տեխնոլոգիական ներուժի ներկայացումը Սիլիկոնային հովտում և ամերիկյան ներդրողներին:

Նույն օրը պատվիրակությունը հանդիպել է նաև <<Synopsys>> ընկերության ղեկավար կազմի հետ: <<Synopsys>> ընկերության գլխավոր ճարտարապետ Ե. Զորյանը, ՀԲԸՄ տեղական մարմնի օժանդակությամբ, ընկերության գրասենյակում կազմակերպել էր Հակոբ Արշակյանի գլխավորած պատվիրակության հանդիպումը Սիլիկոնային հովտում աշխատող ազգությամբ հայ բարձր տեխնոլոգիաների մասնագետների, ներդրումային հիմնադրամների ներկայացուցիչների, գործարարների, ստարտափների ղեկավարների հետ: Հ. Արշակյանը հանդես եկավ ծավալուն ելույթով՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության գիտարար, տեխնոլոգիական, կրթական, գործարար ոլորտները, ՀՀ Կառավարության կողմից իրականացվող բարեփոխումները կառավարման ոլորտում, գործարար և մրցակցային միջավայրերի բարելավումը: Նա նշել է, որ իր այցի խնդիրներից մեկն է համարում համապատասխան հարթակի ձևավորումը, որը թույլ կտա մնայուն և արդյունավետ կապ հաստատել, պահպանել ու զարգացնել փոխգործակցությունը Հայաստան-Սփյուռք տեղեկատվական և տեխնոլոգիական ոլորտի ներկայացուցիչների միջև:

ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանի գլխավորած պատվիրակության աշխատանքային այցը շարունակվել է Լոս Անջելեսում: Նախարար Արշակյանը, Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոս Ա.Բայբուրդյանի մասնակցությամբ, այցելել է Գլենդեյլ քաղաքում գործող <<ServiceTitan>> ընկերության գրասենյակ: Ընկերությունը հիմնադրվել է ծագումով հայերի կողմից, և ներկայումս ԱՄՆ-ում տվյալ ոլորտի առավել արագ զարգացող ընկերություններից է՝ ավելի քան 1.65 միլիարդ ԱՄՆ դոլարի շուկայական արժեքով: Ընկերության համահիմնադիր Վահե Կուզոյանի հետ հանդիպման ժամանակ քննարկվել են գործակցության մի շարք հարցեր: Նախարար Արշակյանը ողջունել է <<ServiceTitan>> ընկերության կողմից Հայաստանում իրականացված ներդրումը և ընկերության գրասենյակի բացումը՝ նշելով, որ դա լավագույն ապացույցն է, երբ հայրենասիրությունը և գործարար շահը համատեղվում են:

Հանդիպում է տեղի ունեցել նաև Լոս Անջելեսի փոխքաղաքապետ Նինա Հաջիգյանի հետ:

Շրջայց է տեղի ունեցել <<La Kretz>> նորարական ավանում, որն օժանդակություն է ցուցաբերում ստարտափներին սկսած 2011 թվականից՝ նպատակ ունենալով օգնել այդ ընկերություններին շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնոլոգիաների հասանելիության, փորձագիտական օժանդակության գործում: Պատվիրակությանը ներկայացվել են բնապահպանական բարձր տեխնոլոգիաները, դրանց կիրառումը և ներդրման առանձնահատկությունները:

Հունիսի 1-ին Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոսությունում նախարար Արշակյանը հանդիպել է Գլենդեյլի քաղաքապետ Արա Նաջարյանի, քաղաքային խորհրդի անդամներ Զարեհ Սինանյանի և Վարդան Ղարպետյանի հետ, որի ընթացքում նա ներկայացրել է իր այցի շրջանակներում տեղի ունեցած կարևոր հանդիպումները, նոր կազմավորվող նախարարության նպատակները և խնդիրները: Հանդիպման մասնակիցները մտքեր են փոխանակել Գլենդեյլի

տեխնոլոգիական և գործարար համայնքի ու հայկական ընկերությունների համագործակցության վերաբերյալ:

Հանդիպում է կազմակերպվել նաև <<IntelinAir Armenia>> ընկերության հիմնադիր Ալ Էյսայանի հետ, որի ընթացքում քննարկվել են նորագույն տեխնոլոգիաների միջոցով Հայաստանի տարածքի ճշգրիտ թվային քարտեզի ստեղծման հարցը, որը հետագայում կարող է ծառայել թե՛ գյուղատնտեսության, թե՛ սահմանային անվտանգության, թե՛ հողերի սեփականության քարտեզների ճշգրտման և թե՛ գիտահետազոտական նպատակներով:

Կայացել է Նախարար Հակոբ Արշակյանի հանդիպումը կալիֆորնիահայ գործարար համայնքի հետ: Նախարարը ներկայացրել է Սիլիկոնային հովտում իր այցի արդյունքները, ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության երեք հիմնական նպատակները՝ տեխնոլոգիական մտքի ծառայեցումը ռազմական արդյունաբերության զարգացմանը, թվայնացումը, որը կհանգեցնի պետական համակարգի արդիականացմանը, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, ինժեներական ստարտափների և էկոհամակարգի զարգացումը:

Հունիսի 4-ին Վաշինգթոնում Հ. Արշակյանը հանդիպել է ԱՄՆ Առևտրի քաղաքականության և բանակցությունների հարցերով ենթաքարտուղարի տեղակալ Դեյվիդ Միլիի հետ: Նա ներկայացրել է նորաստեղծ նախարարության խնդիրներն, արդեն իսկ ուրվագծված և հետագա ծրագրերը: Նախարարը նշել է, որ կառավարման ոլորտում Կառավարության կողմից իրականացվող բարեփոխումները, գործարար և մրցակցային միջավայրերի բարելավումը ստեղծել են անհրաժեշտ բոլոր պայմանները ոլորտի զարգացման համար: Համագործակցությունն այս ոլորտում անկասկած զարգացման մեծ հեռանկար ունի՝ պայմանավորված ԱՄՆ-ում բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման մակարդակով և ՀՀ-ում գիտական, կրթական և գործարար ներուժի առկայությամբ, որը պետք է օգտագործել առավելագույնս ու նույն արագությամբ, որով զարգանում են տեխնոլոգիաները: Դ. Միլին կարևորեց ԱՄՆ-ում հայկական սփյուռքի առկայությունն՝ այս ոլորտում երկու երկրների միջև համագործակցությունը զարգացնելու համար: Կողմերն անդրադարձան ԱՄՆ-ից Հայաստան երկակի նշանակության ապրանքների ու տեխնոլոգիաների արտահանման սահմանափակումներին և պատրաստակամություն հայտնեցին ակտիվ համագործակցել նշված խնդրի լուծման ուղղությամբ:

ԱՄՆ Եվրոպայի և Եվրասիայի հարցերով ենթաքարտուղարի տեղակալի պաշտոնակատար Դեյվիդ Դե Ֆալկոյի հետ հանդիպման ընթացքում Հ. Արշակյանը ներկայացրեց ՀՀ-ում վերջին շրջանում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները, տնտեսության զարգացման համար կառավարության որդեգրած առաջնահերթությունները և իր կողմից ղեկավարվող նորաստեղծ նախարարության տեսլականը՝ ՀՀ-ում բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման ուղղությամբ: Քննարկվեցին հայ-ամերիկյան համագործակցության ընդլայնման հետագա հնարավորությունները, ՀՀ-ում ԱՄՆ ընկերությունների լավագույն փորձի ներդրման հեռանկարները, ՀՀ գիտական ու տեխնոլոգիական ներուժի խթանման տարբերակները: ՀՀ-ում տեղի ունեցող դրական զարգացումների համատեքստում Դեյվիդ Դե Ֆալկոն կարևորեց գործընկերային հարաբերությունների հետագա զարգացումը հատկապես մասնավոր ոլորտի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հանդիպում է անցկացվել նաև Համաշխարհային բանկի ֆինանսների, մրցունակության և նորարարությունների համաշխարհային փորձի գծով տնօրեն Ալֆոնսո Գարսիա Մորայի, Մակրոտնտեսության, առևտրի և ներդրումների համաշխարհային փորձի գծով տնօրեն Մարիալիսա Մոտայի, Համաշխարհային բանկի Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների ծրագրի ղեկավար Կարեն Գրիգորյանի հետ: Հանդիպման ընթացքում Հ. Արշակյանը, ներկայացնելով նորաստեղծ նախարարության առաջնահերթությունները, կարևորեց ՀՀ-ում ազգային վենչուրային ֆոնդ ստեղծելու նախաձեռնությունը, որը գործելու է հանրային և մասնավոր գործընկերության (PPP) սկզբունքով: Նախարարն ընդգծեց, որ Սիլիկոնային հովտում իր ունեցած հանդիպումների ընթացքում այս նախաձեռնությունը մեծ հետաքրքրություն է առաջացրել բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների, այդ թվում՝ հայ մասնագետների ու հայկական ծագման ընկերությունների մոտ: Համշախարհային Բանկի ներկայացուցիչները գոհունակությամբ արձանագրեցին ՀՀ-ում ճարտարագիտության բարձր մակարդակը և դրա ներուժի առավելագույն օգտագործման նպատակով նորաստեղծ նախարարության նպատակները: Կարևորվեցին Համաշխարհային Բանկի հետ իրականացվող ծրագրերը, մասնավորապես՝ ինժեներական քաղաքի, կիբեռանվտանգության և նորարարության աջակցման ծրագրերի իրականացումը, ինչպես նաև քննարկվեցին ազգային վենչուրային ֆոնդի ֆինանսավորման, թվային տնտեսության ուղղությամբ հնարավոր համագործակցության ուղղությունները:

Հարկ է նշել նաև հունիսի 4-ին կայացած հանդիպումն ԱՄՆ Կոնգրեսի անդամ և Հայկական հարցերով հանձնախմբի անդամ Աննա Էշուի հետ՝ Հ. Արշակյանը Կոնգրեսական Էշուին ներկայացրել է Սիլիկոնային Հովիտ իր կատարած այցը և դրա ընթացքում բարձր տեխնոլոգիաների ոլորտի հեղինակավոր ընկերությունների ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումներն ու ձեռք բերված պայմանավորվածությունները: Քննարկվել են ոլորտի զարգացմանն ուղղված մի շարք հարցեր, մասնավորապես՝ Բերքլիի, Սթենֆորդի, Սանթա Քլարայի համալսարանների հետ փոխանակման ծրագրերի իրականացման հեռանկարները, Օրաքլ, Սիսքո և նմանատիպ այլ ընկերությունների հետ համագործակցության հաստատման ու ընդարձակման հնարավորությունները: Առանձնակի կարևորվել է բարձր տեխնոլոգիաների ոլորտում երկկողմ համագործակցության ընդլայնման և զարգացման հարցում Կալիֆորնիայի հայ համայնքի դերն ու ներգրավվածությունը:

Նույն օրը Նախարարը հանդիպել է Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի (ANCA) նախագահ Ռաֆֆի Համփարյանին և Ամերիկայի հայկական համագումարի գործադիր տնօրեն Բրայան Արդունիին, ում ներկայացրել է բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում ՀՀ կառավարության առաջնահերթությունները, նորաստեղծ նախարարության խնդիրներն ու նպատակները: Նախարարը հակիրճ ներակայացրել է նաև Սիլիկոնային հովտում տեղի ունեցած հանդիպումներն ու քննարկումները, մասնավորապես՝ հայ մասնագետների ու հայկական ծագման ընկերությունների միջև, և ընդգծել է, որ վերջիններս հսկայական դեր ունեն՝ Սիլիկոնային հովտում Հայաստանի գիտարար, տեխնոլոգիական ներուժն ու ամերիկյան ներդրողներին ՀՀ-ում ներդրումային հնարավորությունները ներկայացնելու առումով: Քննարկվել են ԱՄՆ-ում հայ համայնքի և հայկական կազմակերպությունների միջև հետագա սերտ համագործակցության

անհրաժեշտությունը՝ ՀՀ-ում բարձր տեխնոլոգիական արդյունաբերության հետագա զարգացման և տարածաշրջանում միանշանակ առաջատար դիրքեր ապահովելու նպատակով:

Սրան հաջորդել է ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Վարուժան Ներսեսյանի ու Վաշինգտոնում բարձր տեխնոլոգիաների ու նորարարությունների ոլորտի առաջատար <<Institute for Education>> կազմակերպության Գլխավոր գործադիր տնօրեն Քեթրին Քեմփերի կողմից կազմակերպված քննարկումը, որին ներկա էին նաև Սպիտակ տան ու ԱՄՆ Կոնգրեսի նորարարությունների խորհուրդների ղեկավար կազմն ու անդամները: Քննարկման մասնակիցների թվում էին Սպիտակ տան Գիտությունների և տեխնոլոգիական քաղաքականության գծով գլխավոր խորհրդականի տեղակալ Քորիանա Զարեկը, Սպիտակ տան Նորարարությունների նախագահական ընկերակացության ծրագրի գործադիր տնօրեն Ջոշուա դի Ֆրանսեզը և Սպիտակ տան Նորարարությունների նախագահական ընկերակացության ծրագրի նախագահ Կլարա Ցաոն: Ծրագրում ներկայումս ընդգրկված են ԱՄՆ պետական ու մասնավոր ոլորտները ներկայացնող հաստատությունների ու խոշոր կորպորացիաների նորարարությունների ոլորտի առաջատար մասնագետներ, ովքեր ԱՄՆ նախագահի հովանու ներքո գործող այս ծրագրի շրջանակներում աշխատում են ոլորտի՝ երկրի համար առաջնային նշանակություն ունեցող խնդիրների լուծման ուղղությամբ: Նախարար Արշակյանը ներկայացրել է տվյալ ոլորտում ՀՀ առաջընթացը, նախարարության ընթացիկ ծրագրերն ու նպատակները, Սիլիկոնային հովիտ կատարած այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումներն ու ձեռքբերված պայմանավորվածությունները և Հայաստանում ներդրումային հնարավորությունները: Քննարկվել են Հայաստանի գործարար միջավայրին, ոլորտի կրթական բարեփոխումներին, նորարարական լաբորատորիաների ստեղծմանը, կիբեռանվտանգությանն առնչվող և այլ հիմնահարցեր:

Նախարարի այցելություններն ԱՄՆ-ում եզրափակվեցին ՀՀ դեսպան Վ. Ներսեսյանի մասնակցությամբ հանդիպումով USAID-ի Եվրոպայի և Եվրասիայի գրասենյակի ենթաղեկավարի տեղակալ Ալեքսանդր Սոկոլովսկու հետ: Հանդիպմանը մասնակցում էին նաև ԱՄՆ Համաշխարհային զարգացման լաբորատորիայի փորձագետները: Հ. Արշակյանը ներկայացրել է նորաստեղծ նախարարության խնդիրներն ու ծրագրերը, անդրադարձել է Սիլիկոնային հովիտ կատարած իր այցին ու գործնական հանդիպումներին: Քննարկվել է նաև Երևանի Պոլիտեխնիկական համալսարանում ներդրված Հայկական ազգային ինժեներական լաբորատորիաների հաջողված փորձը, որտեղ օգտագործվել են հայկական արտադրության սարքավորումներ, լաբորատորիաների զարգացման ծրագրերն ու արտերկրում նման փորձի կիրառման հեռանկարը: Ա. Սոկոլովսկին ՀՀ-ում բարձր տեխնոլոգիաների ոլորտի առաջընթացի վերաբերյալ իր տպավորություններով կիսվեց ներկաների հետ և ընդգծեց, որ USAID-ի համագործակցությունը ՀՀ-ի հետ այս ոլորտում հաջողված է այն առումով, որ արդարացվել է USAID-ի ռազմավարությունը՝ ներդրումներ կատարել ցածր եկամուտ ունեցող, սակայն զարգացման հսկայական ներուժ ունեցող երկրներում: Նախարարը ևս իր գոհունակությունն է հայտնել USAID-ի հետ համագործակցությամբ Երևանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում LAB-ի ներդրման ու հետագա արդյունավետ գործարկման առնչությամբ՝ ընդգծելով ՀՀ գիտական, տեխնոլոգիական և կրթական ներուժի առկայությունը, որպես հաջողության հիմնական գրավական: Կողմերը քննարկել են համագործակցության այնպիսի հնարավորություններ, ինչպիսիք են

ստարտափներին համար մարքեթինգի վերաբերյալ համապատասխան դասընթացների կազմակերպումը, ԱՄՆ առաջատար համալսարանների կրթական ծրագրերի՝ Պոլիտեխնիկական համալսարանում ներդրումը, ազգային վենչուրային ֆոնդի ֆինանսավորումը, թվային տնտեսության, կիբեռանվտանգության ուղղությամբ հնարավոր համագործակցության ուղղությունները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նախարարությունն աշխատում է այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների շուրջ ծրագրերի և դրանց ժամանակացույցերի սահմանման ուղղությամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Հակոբ Արշակյան 14.06.2019թ.